

## Կարծիք

Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ներկայացված  
*Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները*  
*ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում*  
ատենախոսության մասին

Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի *Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում* ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից: Աշխատանքի վերջում ներկայացված են օգտագործված գրականության ցանկը, սկզբնաղբյուրները և համացանցային կայքերը:

Ներածության մեջ ատենախոսը նախ հիմնավորում է թեմայի ընտրությունը և նրա *արդիականությունը*՝ պայմանավորելով այն իր հետազոտական նյութի կենսունակությամբ, սահմանում է աշխատանքի հիմնական *նպատակն* ու նրա պարզաբանման հետ կապված *խնդիրները*, ապա ներկայացնում է հետազոտության *ատարկան*, վերլուծության ընթացքում կիրառվող *մեթոդներն* ու մոտեցումները, հետազոտության գիտական *նորույթը* և, վերջապես, պարզաբանում է կատարվելիք աշխատանքի *գործնական և տեսական արժեքները*:

Աշխատանքի *նպատակն* է ուսումնասիրել լրագրային խոսույթի ներակա մակարդակում ասույթային դիրքորոշման առանձնահատկությունները և դրանց լեզվական դրսևորումները:

Ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ ատենախոսն անհրաժեշտ է համարում պատասխանել մի շարք հարցադրումների.

որտ՞նք են եղանակավորման միջոցները տեքստի արտակա և ներակա մակարդակներում,

ինչպե՞ս են առնչվում ուսումնասիրվող եղանակավորության տիպերը խոսույթի ներագոյողական գործառույթի և ճշմարիտ ու ոչ ճշմարիտ երկատման տեսանկյունից,

որտ՞նք են ֆրանսիական լրագրային խոսույթի առանձնահատկությունները,

ինչպե՞ս է բնութագրվում ֆրանսալեզու լսարանի հավաքական կերպարը տեքստի արտակա և ներակա մակարդակներում

Առաջադրված նպատակներով և խնդիրներով պայմանավորված ատենախոսը կիրառել է վերլուծության, համադրման, բաղադրիչային և համատեքստային, ինչպես նաև անվանագիտական և իմաստաբանական ուսումնասիրության մեթոդներ:

Հետազոտության նյութ են ծառայել ֆրանսիական տպագիր մամուլի (Le Monde, L'Express, Le Point, Marseille/info) հայտնի համապետական և ռեգիոնալ պարբերականներում տպագրված հոդվածներ:

Ատենախոսության առաջին գլուխում («Եղանակավորության լեզվաբանական հայեցակերպը»), ուսումնասիրվում է հայ, ռուս և ֆրանսալեզու լեզվաբանների աշխատություններում եղանակավորության տեսությանը վերաբերող հարուստ ավանդույթը, մասնավորապես, շարահյուսական, իմաստագործառական, իմաստագործաբանական, նշանագիտական և լեզվափիլիսոփայական բնության մակարդակներում:

Երկրորդ գլուխում («Ֆրանսիական լրագրային խոսույթի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները») քննության են առնվում ֆրանսիական լրագրության պատմական ավանդույթները, ինչպես նաև մասնագիտական բարեվարքության հիմնական կանոնները և լրագրության գործառույթները: Ուսումնասիրվում են ժամանակակից ֆրանսիական գրավոր մամուլում ընդունված հիմնական ժանրերը և դրանց լեզվաոճական գլխավոր առանձնահատկությունները:

Երրորդ գլխում («Եղանակավորման արտակա և ներակա դրսևորումները ժամանակակից ֆրանսիական մամուլում») ատենախոսը հետազոտում է եղանակավորության լեզվական արտահայտչամիջոցները, որոնցից են

բայական եղանակների մոդալ արժեքները,

եղանակավորող բայերի բազմիմաստությունը,

հորդորական եղանակավորման ենթատիպերը և դրանց ներունակային իմաստների դրսևորումները:

Հետազոտության արդյունքները թույլ են տվել ներկայացնել տասնհինգ կետերով շարադրված համապատասխան եզրակացություններ, որոնք սպառիչ կերպով ամփոփում են նախորդ գլուխներում կատարված տեսական և գործնական վերլուծությունների արդյունքները:

Գրականության հարուստ ցանկը ներառում է թեմայի հետ առնչվող արդեն դասական արժեք ներկայացնող հանրահայտ լեզվաբանների կատարած աշխատություններ:

Աշխատանքը շարադրված է հստակ և պարզ ոճով, ունի տրամաբանորեն փաստարկված, ատենախոսի առջև դրված հիմնահարցերով պայմանավորված կուր կառուցվածք:

Ատենախոսությունը նոր հեռանկարներ է բացում զանգվածային լրագրության տեքստերի տարաբնույթ ուսումնասիրության համար:

Վերոհիշյալը վկայում է, որ Ս. Թադևոսյանն ավարտուն և ինքնատիպ աշխատանքի հեղինակ է, բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող խոստումնալից լեզվաբան:

Ինչպես բոլոր ինքնատիպ ուսումնասիրություններում, գրախոսվող աշխատանքը զերծ չէ վիճահարույց դրույթներից և որոշ դիտարկումների տեղիք է տալիս:

I. Վերնագրի մեջ արժեր արձանագրել, որ խոսքը վերաբերում է ոչ միայն եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցների, այլև բառապաշարի ուսումնասիրությանն ու վերլուծությանը, քանի որ բառերի վերլուծությամբ են նաև վեր հանված ներակա բառիմաստները և դրանց եղանակավորող նշանակությունները:

II. Երրորդ գլուխում (« Եղանակավորման արտակա և ներակա դրսևորումները ժամանակակից ֆրանսիական մամուլում ») վերլուծության է ենթարկվել յոթ առաջնորդող հոդված՝ տպագրված ֆրանսիական հայտնի պարբերականներում, ինչպես նաև Մարսելի քաղաքային համայնքի սոցիալ - քաղաքական խնդիրները լուսաբանող «Marseille/infos» հանդեսում տպագրված բազմաբնույթ նյութերը (Նշված չեն համարները):

1. Le monde 2020, հոկտեմբերի 7, «La nouvelle complexité de la crise du Haut-Karabakh»

2. «L'Express» №3231 պատկերազարդ ամսագրի (magazine) խմբագրական հոդվածը

3. «Le Point» (№2125, 2013) պատկերազարդ ամսագրի Cette fâcheuse et nuisible vérité qui infeste notre pays... վերտառությամբ հոդվածը,

4. 2019թ.-ի հունվարի 14-ի Le Monde օրաթերթի առաջնորդող հոդվածը,
5. 2020թ.-ի դեկտեմբերի 22-ի « Le Monde » օրաթերթի առաջնորդող հոդվածը
6. 2013թ.-ին «L'Humanité» պատկերազարդ ամսագրի «Union contre les ordres de Bruxelles» վերտառությամբ խմբագրական հոդվածը, համարը չի նշված

7. «L'Express» պատկերազարդ ամսագրում լույս տեսած «L'eau noire de l'inconnu» վերնագրով խմբագրական հոդվածը, տարին և համարը նշված չեն:

Ցանկալի է տեսնել հիմնավորում, թե ինչու են ընտրված հատկապես 2013, 2019, 2020 թվականի լրագրային նյութերը: Հնարավոր է արդյոք, որ տարբեր տասնամյակների հոդվածներում եղանակավորման դրսևորումները լինեն տարբեր կախված աշխարհաքաղաքական իրավիճակից կամ երկրի ներքին քաղաքականությունից:

III. Որոշ դիտարկումներ գրականության ցանկի հետ կապված.

1) Կարծում եմ, որ կարևոր բացթողում է, որ գրականության ցանկում չի նշված Հ.Պետրոսյանի, Ս.Գալստյանի, Թ.Ղարազույանի *Լեզվաբանական բառարան, Երևան, 1975*, ինչպես նաև Le Petit Robert, dictionnaire de la langue française, 2023, *Ֆրանսերեն – հայերեն բառարան*, Երևան, 2010, И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1976 աշխատանքները,

2) Ավելի նպատակահարմար կլիներ գիտական աշխատությունները և հոդվածները ներկայացնել առանձին ցանկերով (133 անուն աշխատություններից 38-ը հոդվածներ են),

3) Միննույն հեղինակի աշխատությունները արժե տեղադրել ժամանակագրական կարգով (օրինակ՝ էջ 115, ոչ թե Գ.Ջահուկյան, 1974, 1960 1969, այլ՝ Գ.Ջահուկյան, 1960, 1969 1974, էջ 120, ոչ թե С. Kerbrat-Orecchioni, 1980, 1983, 1999, 2009, 1977, այլ՝ С. Kerbrat-Orecchioni, 1977,1980, 1983, 1999, 2009 հերթականությամբ (P. Charaudeau, 1997, 2006, 1994, 1993, 1992, 2005)

4) էջ 59-ում հղում է արվում *Թաղևոսյան 2022* հոդվածին, գրականության ցանկում կա *Թաղևոսյան 2022* երեք հոդված, պարզ չէ, թե որ հոդվածի մասին է խոսքը:

IV. Ցանկալի է օգտագործել հայերեն բառեր՝ էջ 51, *կոմերցիոն* բաղադրիչի փոխարեն *շահույթ հետապնդող* բաղադրիչ:

V. prêter բայն ունի մի շարք սահմանումներ, ավելի շուտ նշանակություններ, որոնցից ատենախոսը էջ 59-ում ներկայացրել է մեկը, իր գրածով ստացվում է, որ դա միակն է՝ « prêter բայը ունի հետևյալ սահմանումը »:

Կարծում եմ, որ ձայնավորից առաջ ցանկալի է օգտագործել « ն » որոշյալ հոդը, ոչ թե « ը »:

VI. Էջ 71-ում սխալ վերլուծության է ենթարկվել « brailard » բառը, որն ունի « personne qui braille ; qui crie fort ` աղմկարար անձ » և ոչ թե « enfant naïf / docile » իմաստը: Տե՛ս *Ֆրանսերեն – հայերեն բառարան*, Երևան, 2010 և *Le Petit Robert 2024* բառարանները, որոնք, ի դեպ, չեն նշվել գրականության ցանկում: Ենթադրում եմ, որ շփոթության պատճառ է դարձել նախադասության մեջ առկա « gogo » բառը, որն ունի « personne crédule et naïve, facile à tromper ; naïf » իմաստները:

VII. Աշխատանքը գերծ չէ նաև սակավաթիվ կետադրական, ոճական սխալներից և շարադրանքի մի շարք անհաջող ձևակերպումներից (էջ 5, 7, 8, 10, 13, 15, 17, 34, 54, 84, 95, 110):

VIII. Շփոթություն է առաջացնում նաև եզրակացության կետերի համարակալման անհամապատասխանությունը ատենախոսության և սեղմագրի մեջ:

Կարծում եմ, որ ատենախոսության եզրակացության 1, 2, 3, 4, 5, 6 (սեղմագրի 1, 2) կետերը, որտեղ խոսվում է եղանակավորության եռանիստ էության, չորս տիպերի ու նրանց արտահայտության միջոցների մասին (« Այս դեպքում բացահայտվում է եղանակավորման, այն է՝ հասցեագրողի հաղորդակցական դիտավորությունը, ինչպես նաև նրա վերաբերմունքը սեփական խոսքի և հասցեատիրոջ՝ ընթերցողի նկատմամբ : » էջ110), կարող են բնութագրել ոչ միայն լրագրային խոսույթը, այլև ցանկացած խոսույթ, ոչ միայն ֆրանսիական, այլև այլալեզու խոսույթ, ուստի ավելի նպատակահարմար կլիներ եզրակացության մեջ արձանագրել այդ հանգամանքը:

Սակայն ներկայացվող դիտարկումները ոչ մի կերպ չեն անդրադառնում ատենախոսության ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսության սեղմագիրը (չհաշված եզրակացության կետերի համարակալման անհամապատասխանությունը) և այս թեմայով հրատարակված հոդվածները լիովին արտացոլում են գրախոսվող աշխատանքի բովանդակությունը:

Ամփոփելով ասեմ, որ Սյուզաննա Գագիկի Թադևոսյանի *Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում* ատենախոսությունը՝ լինելով լուրջ և ինքնատիպ գիտահետազոտական ուսումնասիրություն, իր արդիականությամբ, տեսական և գործնական արժեքով լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից գիտական աստիճանի հայցման համար

առաջադրված պահանջները: Աշխատանքը համապատասխանում է *Ճ.02.07 թվանիշով «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ գիտական աստիճանի հայցման համար առաջադրված ատենախոսության պայմաններին:*

Ռոզա Մելիքսեթյան  
բ.գ.թ., դոցենտ  
ԵՊՀ, Ֆրանսիական բանասիրության  
ամբիոն

4 նոյեմբերի 2023 թ.

Ռոզա Մելիքսեթյանի ստորագրությունը հաստատում եմ՝



ԵՊՀ գիտական քարտուղար՝  
Սերի Վազգենի Հովհաննիսյան  
բ.գ.թ., դոցենտ